



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ
23 դեկտեմբերի 2025 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 5-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 4-ՐԴ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 56 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Սարգիս Մադաթյանը և Լևոն Հովհաննիսյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Վիլեն Արևշատյանը, քաղաքապետի խորհրդականներ՝ Կամո Արեյանը, Սոնա Թևանյանը և Արման Լազրյանը, քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արմինե Ստեփանյանը, եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Հակոբյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, անշարժ գույքի կառավարման վարչության պետ Վահան Խաչատրյանը, բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սիրարփի Հայկազյանը, լրատվության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Օֆելյա Սիմոնյանը, առևտրի, ծառայությունների և գովազդի վարչության պետ Արմեն Առաքելյանը, ֆինանսական վարչության պետ Քրիստինե Ավետիսյանը, վերահսկողության վարչության պետի տեղակալ Խաչատուր Տոնոյանը, հասարակական կարգի պահպանության ծառայության պետի տեղակալ Վախթանգ Բարսեղյանը, Շենգավիթ վարչական շրջանի ղեկավար Տիգրան Գաբրիելյանը և «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Անետա Բաբայանը:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտարարեց, որ Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Կիմա Աբրահամյանն իր դիմումի համաձայն՝ վաղաժամկետ դադարեցրել է ավագանու անդամի իր լիազորությունները:

Համաձայն ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 11-ի հ.22 արձանագրության՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը տրվել է «Քաղաքացիական պայմանագիր»

կուսակցության ընտրական ցուցակի հաջորդ հերթական թեկնածու՝ Խորեն Հովհաննիսյանին:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասով՝ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտարարեց, որ Երևանի ավագանու 6-րդ նստաշրջանի հերթական նիստը կգումարվի 2026 թվականի փետրվարի 10-ին, ժամը 10.00-ին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի նիստի օրակարգից հանում է չգեկուցվող 17-րդ՝ «Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Քրոք Քրոքորյանի փողոց հ.23/8 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» և 22-րդ՝ «Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի ապրիլի 12-ի N85-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու իրավական ակտերի նախագծերը:

Ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը և առաջարկեց օրակարգի չգեկուցվող 3-րդ՝ «Երևան համայնքում տեղական վճարների 2026 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» հարցը քննարկել զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան:

Քվեարկության դրվեց օրակարգի չգեկուցվող 3-րդ՝ «Երևան համայնքում տեղական վճարների 2026 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» հարցը զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան դարձնելու առաջարկը:

Կողմ՝ 23, դեմ՝ 31, ձեռնպահ՝ 2

Առաջարկը չընդունվեց:

Ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար Արամ Թորոսյանը և առաջարկեց օրակարգի չգեկուցվող 15-րդ՝ «Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Լեփսիուսի փողոց հ.6 հասցեում Երևանի հ.136 հիմնական դպրոցի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» հարցը քննարկել զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան:

Քվեարկության դրվեց օրակարգի չգեկուցվող 15-րդ՝ «Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Լեփսիուսի փողոց հ.6 հասցեում Երևանի հ.136 հիմնական դպրոցի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» հարցը զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան դարձնելու առաջարկը:

Կողմ՝ 22, դեմ՝ 29, ձեռնպահ՝ 0

Առաջարկը չընդունվեց:

Ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալստյանը և հայտնեց, որ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը դեմ է ներկայացված առաջարկություններին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ Երևանի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի հերթական նիստի օրակարգի նախագծում ընդգրկված է 28 հարց, որից՝ 2-24-րդ հարցերը չզեկուցվող են:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտարարեց, որ քվեարկության է դրվում Երևանի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի հերթական նիստի օրակարգի նախագիծը:

1. Երևան քաղաքի ավագանու 5-րդ նստաշրջանի 4-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևան համայնքում տեղական տուրքերի 2026 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին: (Չզեկուցվող)
3. Երևան համայնքում տեղական վճարների 2026 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին: (Չզեկուցվող)
4. Երևանի զարգացման 2026 թվականի ծրագիրը հաստատելու մասին: (Չզեկուցվող)
5. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
6. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
7. Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2026 թվականի ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ: (Չզեկուցվող)
8. «Կասկադ մշակութային հանգույց» ճարտարապետական նախագծի իրականացման համար տրամադրված հողամասի կառուցապատման իրավունքի տարեկան վճարը անշարժ գույքի տարեկան դրույքաչափով հաշվարկելու մասին: (Չզեկուցվող)
9. Գայի պողոտայի հ.45/7 հասցեում գտնվող՝ սեփականության իրավունքով Արմեն Արսենյանին պատկանող հողամասը Դավիթ-Բեկի փողոցի հ.95/2 հասցեին հարող տարածքում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակությանը համաձայնություն տալու մասին: (Չզեկուցվող)
10. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին: (Չզեկուցվող)
11. Գայանե Պետրոսյանին և Ալլա Մանուկյանին բնակարանի գնման վկայագրեր տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
12. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի փետրվարի 8-ի N 527-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: (Չզեկուցվող)
13. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի N 48-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)

14. Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Լեփսիուսի փողոց հ.6 հասցեում Երևանի հ.136 հիմնական դպրոցի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զգեկուցվող)
15. Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Հ. Թևոսյան փողոց հ.1/5 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զգեկուցվող)
16. Թանգարանային առարկանները ժամանակավոր պահպանության հանձնելու մասին: (Զգեկուցվող)
17. Թանգարանային առարկաները ժամանակավոր պահպանության հանձնելու մասին: (Զգեկուցվող)
18. Միեր Մկրտչյանի արձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին: (Զգեկուցվող)
19. «1944 թվականի Վարշավայի ապստամբության ժամանակ լեհերի կողքին պայքարող հայերի հիշատակին նվիրված» հուշաքարի տեղադրմանը համաձայնություն տալու մասին: (Զգեկուցվող)
20. «Շտապբուժօգնություն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Զգեկուցվող)
21. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զգեկուցվող)
22. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զգեկուցվող)
23. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի N 632-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին: **(Զգեկուցվող)**
24. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 249-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զգեկուցվող)
25. Երևան համայնքում 2026 թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին: (Զեկուցվող)
26. Երևան համայնքում 2026 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին: (Զեկուցվող)
27. Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին: (Զեկուցվող)
28. Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N405-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին: (Զեկուցվող)

**1. ԼՍԵՑԻՆ – Երևանի ավագանու 5-րդ նստաշրջանի 4-րդ նիստի օրակարգը
հաստատելու մասին:**

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 37, դեմ՝ 6, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 18.06.2009թ. N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 5-րդ ենթակետը՝ առաջնահերթ քվեարկության են դրվում օրակարգում ընդգրկված չգեկուցվող՝ 2-ից 24-րդ հարցերը:

2. Երևան համայնքում տեղական տուրքերի 2026 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Սահմանել Երևան համայնքում (այսուհետ՝ Երևան) տեղական տուրքերի 2026 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ.

1) տեղական տուրք վճարողների գրանցամատյանները վարվում են էլեկտրոնային ձևով (համակարգչային ծրագրի կամ ինտերնետային կայքի տեսքով), իսկ դրանց բացակայության դեպքում՝ փաստաթղթային.

2) Երևանի կողմից մատուցվող ծառայությունների (թույլտվությունների տրամադրման) համար տեղական տուրքը գանձվում է նախքան սույն որոշմամբ սահմանված գործողությունների կատարումը (վավերացումը) և (կամ) թույլտվությունների տրամադրումը կամ համայնքային ծառայությունների մատուցումը.

3) սույն որոշմամբ սահմանված թույլտվությունների տրամադրումը կամ գործողությունների կատարումը կարող է մերժվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դրանց տրամադրման համար նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու և (կամ) տեղական տուրքի գումարը չվճարելու, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

3. Անկախ սույն որոշման հավելվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով սահմանված գործակիցների կիրառությունից՝ շինարարության թույլտվության ժամկետները շինարարության թույլտվությամբ սահմանված՝ շինարարության ժամկետի մինչև 20 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով առաջին անգամ երկարաձգելու դեպքում սույն որոշման հավելվածի 2-րդ կետով սահմանված տեղական տուրքի դրույքաչափը հաշվարկվում է 0.5 գործակցի կիրառմամբ: Շինարարության թույլտվության ժամկետների հաջորդ երկարաձգումների դեպքում (անկախ երկարաձգվող ժամկետների տևողությունից) շինարարության թույլտվության երկարաձգման համար տեղական տուրքը հաշվարկվում է սույն որոշման հավելվածի 2-րդ կետով սահմանված դրույքաչափերով:

4. Երևանի քաղաքապետին՝ ապահովել տեղական տուրքերի դրույքաչափերի, վճարման կարգի և ժամկետների, ամսվա ընթացքում տեղական տուրքերի յուրաքանչյուր տեսակի մասով փաստացի ստացված եկամուտների, ինչպես նաև Երևանի ավագանու սահմանած արտոնություններ ստացած անձանց և

համապատասխան գումարների վերաբերյալ իրազեկումն Երևանի պաշտոնական համացանցային www.yerevan.am կայքում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

3. Երևան համայնքում տեղական վճարների 2026 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Սահմանել Երևան համայնքում (այսուհետ՝ Երևան) տեղական վճարների 2026 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ.

1) սույն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի նկատմամբ ենթակա է կիրառման Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ Երևանի համար սահմանված 1-ից մինչև 12 տարածագնահատման գոտիականությունը, կիրառելով 1.9 բազային (առավելագույն) գործակիցը, ընդ որում՝ տարածագնահատման 2-րդ գոտուց սկսած՝ յուրաքանչյուր հաջորդ գոտու նկատմամբ կիրառվում է լրացուցիչ նվազեցնող՝ 0.15 գործակից:

2) տեղական վճար վճարողների գրանցամատյանները վարվում են էլեկտրոնային ձևով (համակարգչային ծրագրի կամ ինտերնետային կայքի տեսքով), իսկ դրանց բացակայության դեպքում՝ փաստաթղթային:

3) Երևանի կողմից մատուցվող ծառայությունների համար տեղական վճարը գանձվում է ծառայության մատուցումից առաջ, ընդ որում՝ սույն որոշմամբ հաստատված հավելվածի 23-րդ և 24-րդ կետերում նշված ծառայությունների մատուցման դիմաց տեղական վճարը գանձվում է մինչև յուրաքանչյուր ամսվա 6-ը, բացառությամբ սույն որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ, 22-րդ, 28-րդ և 35-րդ կետերում նշվածների, որոնց դեպքում տեղական վճարը գանձվում է ծառայությունը մատուցելուց հետո: Ընդ որում՝ սույն որոշմամբ սահմանված հավելվածի 35-րդ կետում նշված ծառայությունների դիմաց տեղական վճարը վճարվում է որակի աստիճանի շնորհման ժամկետում՝ նույն կետով սահմանված կարգով:

4) սույն որոշմամբ սահմանված հավելվածի 24-րդ կետում նշված ծառայությունների դիմաց վճարման ենթակա տեղական վճարի ամսական դրույքաչափը վճարվում է 2026 թվականի 10 ամսվա ընթացքում մատուցած ծառայությունների դիմաց (2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի հուլիսի 1-ը և 2026 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ուսուցման համար):

5) Երևան քաղաքի վարչական տարածքում պետական գույքի օտարման դեպքում Երևան քաղաքի ավագանու որոշմամբ սահմանված նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու համար տեղական վճարը վճարվում է նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք) ուժի մեջ մտնելու պահից մեկ ամսվա ընթացքում:

6) սույն որոշմամբ սահմանված ծառայությունների մատուցումը կարող է մերժվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դրանց տրամադրման համար նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու և (կամ) տեղական վճարի գումարը չվճարելու դեպքում:

3. Ընդունելի գիտություն, որ՝

1) Երևան քաղաքի վարչական տարածքում գործում է համայնքի վարչական տարածքում տարբեր տեսակի տրանսպորտային միջոցներով (ավտոբուս, տրոլեյբուս, մետրոպոլիտեն) ներհամայնքային կանոնավոր փոխադրումների միասնական ծառայություն, որի շրջանակներում սույն որոշմամբ սահմանված ներհամայնքային կանոնավոր փոխադրումների միասնական ծառայություններից օգտվելու համար սահմանված տեղական վճարը վճարված լինելու դեպքում անձինք նույն ժամկետներում, նույն պայմաններով օգտվում են Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային կանոնավոր փոխադրումներ իրականացնող ավտոբուսների, տրոլեյբուսների և Երևան քաղաքի մետրոպոլիտենի ծառայություններից.

2) ուղևորության քանակական սահմանափակում ունեցող ֆիզիկական կամ էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային կանոնավոր փոխադրումներ իրականացնող ավտոբուսների, տրոլեյբուսների կամ Երևան քաղաքի մետրոպոլիտենի ծառայություններից օգտվելու դեպքում՝ ուղևորության օգտագործման հնարավորությունը ավտոբուսների, տրոլեյբուսների, Երևան քաղաքի մետրոպոլիտենի ծառայություններից օգտվելու յուրաքանչյուր դեպքում՝ 1 օգտագործման հնարավորությամբ նվազեցվում է:

4. Երևանի քաղաքապետին՝ ապահովել տեղական վճարների դրույքաչափերի, վճարման կարգի և ժամկետների, ամսվա ընթացքում տեղական վճարների յուրաքանչյուր տեսակի մասով փաստացի ստացված եկամուտների, ինչպես նաև Երևանի ավագանու սահմանած արտոնություններ ստացած անձանց և համապատասխան գումարների վերաբերյալ իրազեկումն Երևանի պաշտոնական համացանցային www.yerevan.am կայքում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից: Ընդ որում՝

1) Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշմամբ սահմանված Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը վճարած անձինք ֆիզիկական քարտ տոմս, այդ թվում՝ ֆիզիկական կրիչով տոմս, կամ էլեկտրոնային տոմս ձեռք բերած լինելու դեպքում տոմսի գործող ժամանակահատվածում նույն պայմաններով և ժամկետներում շարունակում են օգտվել Երևան քաղաքի վարչական տարածքում ներհամայնքային կանոնավոր փոխադրումների միասնական ծառայություններից՝ առանց սույն որոշմամբ սահմանված տեղական վճարը վճարելու.

2) 2025 թվականի հունվարի 1-ից 2025 թվականի փետրվարի 28-ը ներառյալ «365 օր» ֆիզիկական քարտ տոմս կամ էլեկտրոնային տոմս ձեռք բերված լինելու դեպքում, բացառությամբ Երևան քաղաքի ավագանու կողմից Երևան համայնքում 2026 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին որոշման 1-ին

կետի 51-րդ, 52-րդ, 55-րդ և 56-րդ ենթակետերի, նույն պայմաններով՝ անսահմանափակ քանակով ուղևորությունները կարող են կատարվել ակտիվացման պահից 395 օրվա ընթացքում:

4. Երևանի զարգացման 2026 թվականի ծրագիրը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել Երևանի զարգացման 2026 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշմամբ հաստատված՝ Երևանի զարգացման 2026 թվականի ծրագիրը ենթակա է հրապարակման օրենքով սահմանված կարգով:

5. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 268-Ն որոշման NN 1, 2, 3, 4, 5, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-7 հավելվածների:

6. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 268-Ն որոշման NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-5 հավելվածների:

7. Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2026 թվականի ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2026 թվականի ծրագիրը՝ (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) համաձայն հավելվածի:

2. Ընդունել ի գիտություն, որ.

1) հողամասերն օգտագործման, այդ թվում՝ սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) տրամադրելու և օտարման հետ կապված հարաբերությունները ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքին, Հայաստանի Հանրապետություն քաղաքացիական օրենսգրքին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմանը և հողային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերին համապատասխան.

2) հողամասերի կամ դրանց առանձին հատվածների (մասերի) աճուրդով վաճառքի մեկնարկային գինը չի կարող պակաս լինել հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքից.

3) քանդման ենթակա վթարային բազմաբնակարան շենքերի, բնակելի տների և հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչների բնակարանային խնդիրների լուծման նպատակով, համայնքային կամ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին կառուցված և համայնքային սեփականություն հանդիսացող բազմաբնակարան շենքերի բնակարանների հատկացման կամ այդ բնակարանների տնօրինման հետ կապված հարաբերությունները ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 5-ի N 172-Ն և 2000 թվականի հոկտեմբերի 25-ի N682 որոշումներով հաստատված կարգերին համապատասխան:

4) հողամասերն անհատույց օգտագործման, վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրվում են մինչև 99 տարի ժամկետով, բացառությամբ՝ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Հողամասերի սահմանափակ օգտագործումը (սերվիտուտ) կարող է լինել ժամանակավոր՝ մինչև 99 տարի ժամկետով, կամ մշտական:

5) Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանացած ներդրումային ծրագրերի իրականացման համար հողամասերի ուղղակի վաճառքի դեպքում ձեռք բերողների համար կարող է սահմանվել նաև տարաժամկետ վճարման իրավունք:

6) հողամասերը սեփականության իրավունքով անհատույց տրամադրվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:

7) ինքնակամ կառույցների օտարման կամ օգտագործման տրամադրելու հետ կապված հարաբերություններն ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմանը համապատասխան:

8. «Կասկադ մշակութային հանգույց» ճարտարապետական նախագծի իրականացման համար տրամադրված հողամասի կառուցապատման իրավունքի տարեկան վճարը անշարժ գույքի տարեկան դրույքաչափով հաշվարկելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Համայնքային սեփականություն հանդիսացող Թամանյան փողոցի հ.10/1 հասցեում գտնվող 2.448102 հա մակերեսով հողամասի վրա «Կասկադ մշակութային հանգույց» ճարտարապետական նախագիծ իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հոկտեմբերի 23-ի «ներդրումային ծրագրին հավանություն տալու, «Ջի Թի Բի Դիվելոփմենթ» ՍՊ ընկերությանն առանց մրցույթի կառուցապատման իրավունքով հողամաս տրամադրելուն և ուղղակի վաճառքի ձևով հողամաս օտարելուն համաձայնություն տալու և լիազորություն վերապահելու մասին» հ.1499-Ա որոշման 2-րդ կետով նախատեսված կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասի տարեկան վճարը հաշվարկել անշարժ գույքի հարկի 2026 թվականի տարեկան դրույքաչափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2026 թվականի ծրագրի՝ (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) ուժի մեջ մտնելու օրվանից:

9. Գայի պողոտայի հ.45/7 հասցեում գտնվող՝ սեփականության իրավունքով Արմեն Արսենյանին պատկանող հողամասը Դավիթ-Բեկի փողոցի հ.95/2 հասցեին հարող տարածքում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակությանը համաձայնություն տալու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Համաձայնություն տալ՝ Արմեն Արսենյանին սեփականության իրավունքով պատկանող Գայի պողոտայի հ.45/7 հասցեում, տարածագնահատման 6-րդ գոտում գտնվող 404.77քմ /70.0քմ+334.77քմ/ մակերեսով հողամասը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.290820218-01-0114 վկայական/ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Դավիթ-Բեկի փողոցի հ.95/2 հասցեին հարող տարածքում տարածագնահատման 6-րդ գոտում գտնվող 3247.429քմ մակերեսով համարժեք հողամասի հետ փոխանակելուն:

10. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Էրեբունի փողոցի հ.2/1 հասցեում գտնվող, «Մուշ-Մէդա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման հ.2827289 վկայական) 2.3152հա մակերեսով հողամասից 0.007708հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «բնակավայրերի» հողերի կատեգորիայից փոխադրել «էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

11. Գայանե Պետրոսյանին և Ալլա Մանուկյանին բնակարանի գնման վկայագրեր տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Ռուսթավելի փողոցի հ.112 հասցեում հաշվառված Գայանե Պետրոսյանին և Ռուսթավելու նրբանցքի հ.20 հասցեում հաշվառված Ալլա Մանուկյանին տրամադրել բնակարանի գնման վկայագրեր:

2. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Գայանե Պետրոսյանին և Ալլա Մանուկյանին տրամադրել բնակարանի գնման վկայագրեր՝ Երևան քաղաքի ավագանու կողմից սահմանված պահանջներին համապատասխան՝ համաձայն հավելվածի:

12. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի փետրվարի 8-ի N 527-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի փետրվարի 8-ի «Երևանի Շենգավիթի սեղանի թենիսի և թենիսի մանկապատանեկան մարզադպրոց», «Երևանի Շենգավիթի ակրոբատիկայի և գեղարվեստական մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոց» և «Երևանի Շենգավիթի նետաձգության մարզակումբ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները վերակազմակերպելու, «Երևանի Շենգավիթի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանափոխման և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» N 527-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 1-ին կետում «միավորել» բառը փոխարինել «միացնել» բառով.

2) 3.1-ին կետում «Կազմակերպության» բառից հետո լրացնել «գործունեության» բառը.

3) 4-րդ կետով հաստատված կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

4) 4-րդ կետից հետո լրացնել նոր 5-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«5. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմակերպման արդյունքում հաստատել փոխանցման ակտերը և միացման պայմանագիրը, ինչպես նաև սահմանված կարգով ապահովել վերակազմակերպման գործընթացի իրականացումը:»:

13. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի N 48-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1.

14. Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Լեփսիուսի փողոց հ.6 հասցեում Երևանի հ.136 հիմնական դպրոցի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «ԶԱՆԳՎԱԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Լեփսիուսի փողոց հ. 6 հասցեում Երևանի հ. 136 հիմնական դպրոցի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

15. Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Հ. Թևոսյան փողոց հ.1/5 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «ՆՅՈՒ ԷՌԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Հ. Թևոսյան փողոց հ. 1/5 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

16. Թանգարանային առարկաները ժամանակավոր պահպանության հանձնելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Համաձայնություն տալ «Ժամանակակից արվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի հավաքածուին պատկանող Գրիգոր Աղասյանի «Նոր տարվա նախօրեին» կտավը /1988 թ., կտավ, յուղաներկ, 100 x 122/ 2025 թվականի դեկտեմբերի 24-ից մինչև 2026 թվականի մայիսի 5-ը «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ին ցուցադրության նպատակով ժամանակավոր պահպանության հանձնելուն՝ համաձայն հավելվածի:

17. Թանգարանային առարկաները ժամանակավոր պահպանության հանձնելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Համաձայնություն տալ «Ժամանակակից արվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի հավաքածուին պատկանող 249 թանգարանային առարկաները 2025 թվականի դեկտեմբերի 25-ից մինչև 2028 թվականի դեկտեմբերի 22-ը «Կապանի թանգարանների միավորում» ՀՈԱԿ-ին ցուցադրության նպատակով ժամանակավոր պահպանության հանձնելուն՝ համաձայն հավելվածի:

18. Մհեր Մկրտչյանի արձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Տալ համաձայնություն ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր, հայ մեծանուն դերասան Մհեր Մկրտչյանի արձանի տեղադրմանը Երևան քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցի 6-րդ շենքի հանդիպակաց մայթին հարող կանաչ տարածքում՝ համաձայն հավելվածի:

19. «1944 թվականի Վարշավայի ապստամբության ժամանակ լեհերի կողքին պայքարող հայերի հիշատակին նվիրված» հուշաքարի տեղադրմանը համաձայնություն տալու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Տալ համաձայնություն 1944 թվականի Վարշավայի ապստամբության ժամանակ լեհերի կողքին պայքարող հայերի հիշատակին նվիրված հուշաքարը «Մայր Հայաստան» հուշահամալիրի տարածքում գտնվող ցայտադրյալին կից տեղադրելու համար՝ համաձայն հավելվածի:

20.«Շտապբուժօգնություն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել «Շտապբուժօգնություն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

21. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N 10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 41-Ա որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Վերահսկողության վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Հ/Հ	Վերահսկողության վարչություն	Հաստիքների քանակը	Հաստիքի ամսական պաշտոնային դրույքաչափը	Հավելում	Ընդամենը ամսական աշխատավարձը
1	վարչության պետ	1	697,000		697,000
2	վարչության պետի տեղակալ	2	561,000		1,122,000
3	գլխավոր մասնագետ	2	323,000		646,000
4	առաջատար մասնագետ	2	289,000		578,000
5	խորհրդատու	3	408,000		1,224,000

6	գործավար	1	248,200		248,200
-	Մոնիթորինգի և վերլուծության բաժին				
7	բաժնի պետ	1	408,000		408,000
8	խորհրդատու	1	339,000		339,000
9	գլխավոր մասնագետ	3	289,000		867,000
10	առաջատար մասնագետ	6	282,200		1,693,200
-	Որակի վերահսկողության բաժին				
11	բաժնի պետ	1	408,000		408,000
12	խորհրդատու	1	339,000		339,000
13	գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
14	առաջատար մասնագետ	5	282,200		1,411,000
-	Ներքին անվտանգության բաժին				
15	բաժնի պետ	1	408,000		408,000
16	խորհրդատու	1	339,000		339,000
17	գլխավոր մասնագետ	6	289,000		1,734,000
18	առաջատար մասնագետ	5	282,200		1,411,000
-	Ուսումնասիրությունների կատարման թիվ 1 բաժին				
19	բաժնի պետ	1	408,000		408,000
20	գլխավոր մասնագետ	3	289,000		867,000
21	առաջատար մասնագետ	3	282,200		846,600
-	Ուսումնասիրությունների կատարման թիվ 2 բաժին				
22	բաժնի պետ	1	408,000		408,000
23	գլխավոր մասնագետ	3	289,000		867,000
24	առաջատար մասնագետ	3	282,200		846,600
	ԸՆԴԱՄԵՆԸ	58			18, 693,600

»,

2) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «ԱՄԲՈՂՋԸ՝ Երևանի քաղաքապետարան» տողում «790.0» թվերը փոխարինել «264,597,845» թվերով, «825.0» թվերը փոխարինել «275,651,645» թվերով,

3) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «2336.0» թվերը փոխարինել «2371.0» թվերով, «698,061,245» թվերը փոխարինել «709,115,045» թվերով:

2. Սույն որոշումը համայնքային ծառայության պաշտոնների մասով ուժի մեջ է մտնում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

22. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N41-Ա որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Հասարակական կարգի պահպանության ծառայություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

	Հասարակական կարգի պահպանության ծառայություն				
1	ծառայության պետ	1	697,000		697,000
2	ծառայության պետի տեղակալ	3	561,000		1,683,000
3	գործավար	1	248,200		248,200
-	Տարածքային առաջին բաժին				
4	բաժնի պետ	1	408,000		408,000

5	գլխավոր մասնագետ	4	306,000		1,224,000
6	առաջատար մասնագետ	5	292,400		1,462,000
7	առաջին կարգի մասնագետ	12	278,800		3,345,600
-	Տարածքային երկրորդ բաժին				
8	բաժնի պետ	1	408,000		408,000
9	գլխավոր մասնագետ	4	306,000		1,224,000
10	առաջատար մասնագետ	5	292,400		1,462,000
11	առաջին կարգի մասնագետ	12	278,800		3,345,600
-	Տարածքային երրորդ բաժին				
12	բաժնի պետ	1	408,000		408,000
13	գլխավոր մասնագետ	4	306,000		1,224,000
14	առաջատար մասնագետ	5	292,400		1,462,000
15	առաջին կարգի մասնագետ	12	278,800		3,345,600
-	Տարածքային չորրորդ բաժին				
16	բաժնի պետ	1	408,000		408,000
17	գլխավոր մասնագետ	4	306,000		1,224,000
18	առաջատար մասնագետ	6	292,400		1,754,400
19	առաջին կարգի մասնագետ	12	278,800		3,345,600
	ԸՆԴԱՄԵՆԸ	94			28,679,000

2) «Ընդամենը՝ առանձնացված ստորաբաժանումներ» տողում «1546» և «433,463,400» թվերը փոխարինել համապատասխանաբար «1570» և «440,154,600» թվերով:

3) «Ամբողջը» տողում «2371» և «709,115,045» թվերը փոխարինել «2395» և «715,806,245» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության

տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

23. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի N 632-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին:

1. ՈՐՈՇՎԵՑ – Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի «Երևան համայնքի վարչական տարածքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին» N 632-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման նախաբանում «8-12-րդ,» բառերից և կետադրական նշանից հետո լրացնել «15-րդ,» բառերը և կետադրական նշանը.

2) Որոշման հավելվածում՝

ա. 1-ին կետում «սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով նախատեսված» բառերը.

բ. 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2. Թույլտվությունը տրամադրվում է իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին, իսկ «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով նախատեսված թույլտվություն ստանալու համար ներկայացված դիմումների դեպքում՝ նաև ֆիզիկական անձանց (այսուհետ՝ դիմումատու) Երևանի քաղաքապետի կողմից, իսկ համապատասխան թույլտվությունը տալու լիազորությունը վարչական շրջանի ղեկավարին պատվիրակված լինելու դեպքում՝ համապատասխան վարչական շրջանի ղեկավարի կողմից՝ սույն կարգի N 1 ձևին համապատասխան:».

գ. 3-րդ կետում «Թույլտվություն ստանալու համար դիմումատուն» բառերից հետո լրացնել «, բացառությամբ «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով նախատեսված թույլտվություն ստանալու համար դիմելու դեպքերի,» **բառերը.**

դ. 3-րդ կետից հետո լրացնել նոր 3.1-ին և 3.2-րդ կետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.1. «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով նախատեսված թույլտվություն ստանալու համար, բացառությամբ ֆիրմային անվանումներում համայնքի անվանումը օգտագործելու թույլտվություն ստանալու դեպքերի, դիմումատուն Երևանի քաղաքապետին ներկայացնում է էլեկտրոնային եղանակով դիմում՝ www.dimum.yerevan.am առցանց հարթակի միջոցով, որին կից ներկայացվում են.

1) ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական հաշվառման, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ պետական ռեգիստրի գրանցման քաղվածքը.

2) տեղական տուրքի վճարման անդորրագրի պատճենը.

3) դիմումատուի Երևան համայնքի հանդեպ պարտավորությունների բացակայության վերաբերյալ Երևանի վարչական շրջանի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի պատճենը.

4) խորհրդանիշները (զինանշանը, անվանումը) ապրանքային նշանում օգտագործելու թույլտվություն ստանալու համար դիմելու դեպքում նաև՝ պետական լիազոր մարմնի կողմից տրամադրված ապրանքային նշանի գրանցման վկայագիրը:

3.2. «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով նախատեսված՝ համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվությունները տրամադրվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N 1617-Ն որոշմամբ սահմանված կարգով, դիմումատուի կողմից Երևանի քաղաքապետին էլեկտրոնային եղանակով՝ www.dimum.yerevan.am առցանց հարթակով, դիմում ներկայացնելու միջոցով:».

Ե. 7-րդ կետում «10 աշխատանքային օրվա ընթացքում» բառերից հետո լրացնել «, բացառությամբ «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով նախատեսված՝ համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն ստանալու համար ներկայացված դիմումների,» **բառերը.**

զ. 10-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«10. Թույլտվությունը չի կարող դիմումատուի կողմից փոխանցվել այլ ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի կամ օգտագործվել այլ ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի կողմից:»:

24. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 249-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի վարչական տարածքում առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտում գործունեության կանոնների կիրառման լրացուցիչ պայմանները և լրացուցիչ կանոններ սահմանելու մասին» N 249-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Երևան համայնքի վարչական տարածքում շենքերից, շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկող սարքերի միջոցով առևտուր իրականացնելու կամ ծառայություններ մատուցելու նպատակով Երևան քաղաքի վարչական տարածքում շենքերից և շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկող սարքերի, այդ թվում՝ բանկոմատների, վճարային տերմինալների կամ սառնարանների, սուրճի, ջրի, այդ թվում՝ հանքային, հյութերի և զովացուցիչ ըմպելիքների կամ այլ դիսպենսերների, սարքերի, սարքավորումների (այսուհետ՝ սարքավորում) տեղադրման թույլտվություն ստանալու նպատակով դիմումատուն Երևանի քաղաքապետին ներկայացնում է դիմում՝

էլեկտրոնային եղանակով՝ www.dimum.yerevan.am առցանց հարթակի միջոցով, որին կից ներկայացվում են՝

1) անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական հաշվառման, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ պետական ռեգիստրի գրանցման քաղվածքը.

2) տեղադրվող սարքավորումների քանակին համապատասխան տեղական վճարի վճարման անդորրագրի պատճենը.

3) լուսանկարներ, որոնք արտացոլում են տեղադրվող սարքավորման տեղադիրքը:»:

2) 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Երևան համայնքի վարչական տարածքում շենքերից, շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկող սարքերի միջոցով առևտուր իրականացնելու կամ ծառայություններ մատուցելու նպատակով Երևան քաղաքի վարչական տարածքում շենքերից և շինություններից դուրս սարքավորումների տեղադրման թույլտվությունը (այսուհետ՝ թույլտվություն) տալիս է Երևանի քաղաքապետը, եթե ներկայացված դիմումը բավարարում է սույն հավելվածով սահմանված պահանջներին և պայմաններին:»:

3) 6-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«6. Թույլտվությունը տրվում է յուրաքանչյուր ամսվա համար, սակայն հաջորդ ամիսների համար տեղադրվող սարքավորումների քանակին համապատասխան տեղական վճարի վճարման անդորրագրի պատճենը ներկայացնելու դեպքում թույլտվությունը համարվում է երկարաձգված՝ առանց սույն հավելվածով նշված ընթացակարգը կրկին անցնելու, իսկ սույն հավելվածով սահմանված պահանջների և պայմանների պահպանության նկատմամբ Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվում է ընթացիկ հսկողություն:»:

4) 9-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«9. Սարքավորումը կարող է տեղադրվել մայթերին՝ ապահովելով ոչ պակաս, քան մայթի 1,5 մետր լայնությամբ ազատ անցուղին, բակային տարածքներում կամ շենքերին, շինություններին անմիջական կից կառուցված հարթակներին:»:

5) 10-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«10. Արգելվում է սարքավորումը տեղադրել ճանապարհի կամ փողոցի երթևեկելի մասում, պատմության և մշակույթի անշարժ հուշարձան շենքերի, շինությունների արտաքին պատերին կից հատվածներում և դրանց անմիջական կից մայթերին, դրանցից և Երևան քաղաքում տեղադրված հուշատախտակներից մինչև 10 մետր հեռավորության վրա, կանաչապատ գոտիներում, պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների շենքերի դիմաց, ինչպես նաև ստորև նշված փողոցների կառուցապատման գծերից դուրս հատվածներում՝ բացառությամբ կանգառասրահներում և դրանցից մինչև 10 մետր հեռավորության վրա ծառայություններ մատուցող բանկոմատների և վճարային տերմինալների.

1) Կիկյան փողոց,

2) Մերգեյանի անվան այգի և դրան անմիջական կից մայթեր,

- 3) Վազգեն Առաջին Վեհափառի փողոց,
- 4) Վ. Դավթյանի անվան այգի և դրան անմիջական կից մայթեր,
- 5) Էրեբունի փողոց,
- 6) Տիտոգրադյան փողոց,
- 7) Տ. Մեծի պողոտայի՝ Քրիստափոր-Սասունցի Դավիթ փողոցների միջև ընկած հատված,
- 8) Աբովյան փողոց,
- 9) Ամիրյան փողոց,
- 10) Ա. Թամանյան փողոց,
- 11) Ագաթանգեղոսի փողոցի՝ Տ. Մեծի պողոտայի և Մ. Խորենացու փողոցի միջև ընկած հատված,
- 12) Ազատության հրապարակ և դրան անմիջական կից մայթեր,
- 13) Բեյրութի փողոց,
- 14) Իտալիայի փողոց,
- 15) Իսահակյան փողոցի՝ Մ. Մաշտոցի և Մ. Բաղրամյան պողոտաների միջև ընկած հատված,
- 16) Կոմիտասի անվան պուրակ և դրան անմիջական կից մայթեր,
- 17) Հ. Թումանյան փողոց,
- 18) Հանրապետության փողոց,
- 19) Հյուսիսային պողոտա,
- 20) Հանրապետության հրապարակ և դրան անմիջական կից մայթեր,
- 21) Ղ. Փարպեցու փողոց
- 22) Մ. Բաղրամյան պողոտա,
- 23) Մ. Մաշտոցի պողոտա,
- 24) Մհեր Մկրտչյան փողոց,
- 25) Մոսկովյան փողոցի՝ Մ. Մաշտոցի պողոտայի և Հ. Թումանյան փողոցի միջև ընկած հատված,
- 26) Մ. Սարյան փողոցի՝ Հ. Թումանյան և Ամիրյան փողոցների միջև ընկած հատված,
- 27) Մարտիրոս Սարյանի անվան պուրակ և դրան անմիջական կից մայթեր,
- 28) Մ. Մաշտոցի և Սայաթ-Նովա պողոտաների ու Մոսկովյան փողոցի միջև ընկած այգի,
- 29) Նալբանդյան փողոց,
- 30) Շահումյանի անվան պուրակ և դրան անմիջական կից մայթեր,
- 31) Սայաթ-Նովա պողոտա,
- 32) Վ. Սարգսյան փողոց,
- 33) Տ. Մեծի պողոտայի՝ Հանրապետության հրապարակի և Խանջյան ու Ագաթանգեղոսի փողոցների միջև ընկած հատված,
- 34) Տերյան փողոցի՝ Արամ և Իսահակյան փողոցների միջև ընկած հատված,
- 35) Փ. Բուզանդի փողոց,

- 36) Ֆրանսիայի հրապարակ և դրան անմիջական կից մայթեր,
- 37) Գայի պողոտա,
- 38) Գայի պողոտայի շատրվանների այգի և դրան անմիջական կից մայթեր,
- 39) Թաթուլ Կրպեյանի անվան զբոսայգի և դրան անմիջական կից մայթեր,
- 40) Նոր Նորքի Սուրբ Սարգիս եկեղեցու այգի և դրան անմիջական կից մայթեր,
- 41) Վերաձննդի այգի և դրան անմիջական կից մայթեր,
- 42) Տ. Մեծի անվան այգի և դրան անմիջական կից մայթեր,
- 43) Ֆ. Նանսենի անվան այգի և դրան անմիջական կից մայթեր :»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից: 2025 թվականի հունվարի 1-ից մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը թույլտվություն ստացած սուբյեկտների մասով սույն որոշման 1-ին կետի 4-րդ և 5-րդ ենթակետերով սահմանված կարգավորումների գործողությունները տարածվելու են 2027 թվականի հունվարի 1-ից: Մինչև 2027 թվականի հունվարի 1-ը սույն կետում նշված սուբյեկտների համար գործելու են մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 249-Ն որոշման հավելվածի 9-րդ և 10-րդ կետերով նախատեսված պահանջները:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 32, դեմ՝ 2, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ այժմ քննարկման է ներկայացվում 2025 թվականի դեկտեմբերի 23-ի հերթական նիստի զեկուցվող հարցերը.

25. Երևան համայնքում 2026 թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային՝ Ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևան համայնքում 2026 թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Հակոբյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1. Գրիգոր Իսկանդարյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
2. Մեսրոպ Մանուկյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
3. Դիանա Քերոբյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

4. Արամ Թորոսյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Հակոբյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել է ավագանու 6 անդամ.

1. Սամվել Հակոբյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
2. Մեսրոպ Մանուկյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
3. Վահան Ավագյան – Երևանի ավագանու «Հանրային ծայն» խմբակցության ղեկավար
4. Արմեն Գալստյան – Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար
5. Արամ Թորոսյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար
6. Մանուկ Սուքիասյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության անդամ Հայկ Սահակյանը, իսկ «Հանրային ծայն» խմբակցության անունից՝ խմբակցության անդամ Արտակ Գալստյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևանի վարչական տարածքում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար 2026 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ:

2. Երևան քաղաքի վարչական տարածքում ուսումնական հաստատությունների, Երևան քաղաքի վարչական տարածքում պետական ենթակայությամբ սոցիալական պաշտպանության կազմակերպությունների, ինչպես նաև սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 15 և ավելի տարի առաջ շինարարական աշխատանքները մեկնարկած (փաստը հաստատվում է հիմնավորող փաստաթղթերի կամ տվյալների ներկայացմամբ) և չավարտված մշակույթի շենքերի և շինությունների համար՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ Երևանի վարչական տարածքում շինարարության թույլտվության համար 2026 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ,

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան Երևանի վարչական տարածքում շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար 2026 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ:

3. 2023 թվականի հուլիսի 7-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 687-Ն որոշմամբ սահմանված նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու համար նախատեսված տեղական վճարը վճարված լինելու դեպքում օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան շինարարության թույլտվության տրամադրման համար սահմանված տեղական տուրքի վճարման ենթակա գումարը նվազեցվում է նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու համար սահմանված տեղական վճարի գումարի վճարված չափին համամասնորեն:

4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված նախագծային փաստաթղթերում փոփոխություններ կատարելու դեպքում, որոնց պարագայում յուրաքանչյուր փոփոխության արդյունքում ընդհանուր միասին գումարային արտահայտությամբ վերցված փոփոխվող մակերեսի (շենքերի և շինությունների ստորգետնյա և վերգետնյա հարկերի արտաքին չափերի մակերեսների հանրագումար) ընդհանուր չափը չի գերազանցում մինչև առաջին և յուրաքանչյուր հաջորդական փոփոխությունների կատարումը նախագծային փաստաթղթերով հաստատված մակերեսի հինգ տոկոսը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով նոր շինարարության թույլտվություն տրամադրելիս շինարարության թույլտվության՝ 2026 թվականի համար սահմանված տեղական տուրքի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե դիմումատուն (իրավաբանական անձի դեպքում նաև գործադիր մարմնի ղեկավարը) Երևան համայնքի հանդեպ թույլտվության տրամադրման օրվա դրությամբ չունի ժամկետանց դրամական պարտավորություններ:

5. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված նախագծային փաստաթղթերում սույն որոշման 4-րդ կետով նախատեսված չափից ավելի մակերեսի ավելացում նախատեսող փոփոխություններ կատարելու դեպքում, որոնց արդյունքում նոր շինարարության թույլտվություն տրամադրելիս՝ 2026 թվականի համար սահմանված տեղական տուրքի վճարման ենթակա գումարը գերազանցում է մինչև տվյալ փոփոխություն կատարելը վճարված տեղական տուրքի դրույքաչափը՝ նոր շինարարության թույլտվություն տրամադրելիս՝ 2026 թվականի համար սահմանված տեղական տուրքի նկատմամբ կիրառվում է տեղական տուրքի դրույքաչափի նվազեցման արտոնություն՝ ընդհանուր մակերեսի համար հաշվարկված տեղական տուրքի չափի 80 տոկոսի չափով, եթե նոր

շինարարության թույլտվություն տրամադրելիս 2026 թվականի համար սահմանված տեղական տուրքի և մինչև տվյալ փոփոխություն կատարելը վճարված տեղական տուրքի տարբերությունը չի գերազանցում նոր շինարարության թույլտվություն տրամադրելիս՝ 2026 թվականի համար սահմանված տեղական տուրքի 20 տոկոսը և դիմումատուն (իրավաբանական անձի դեպքում նաև գործադիր մարմնի ղեկավարը) Երևան համայնքի հանդեպ թույլտվության տրամադրման օրվա դրությամբ չունի ժամկետանց դրամական պարտավորություններ:

6. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան Երևանի վարչական տարածքում նոր շենքերի և շինությունների շինարարության թույլտվության ժամկետների 2026 թվականի ընթացքում մեկ անգամ և մինչև 3 ամիս ժամկետով երկարաձգման համար 2026 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե համապատասխան դիմումը ներկայացվել է սահմանված կարգով, դիմումատուն (իրավաբանական անձի դեպքում նաև գործադիր մարմնի ղեկավարը) Երևան համայնքի հանդեպ թույլտվության ժամկետի երկարաձգման օրվա դրությամբ չունի ժամկետանց դրամական պարտավորություններ և Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 44-Ն որոշման 4.2-րդ և 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 266-Ն որոշման 6-րդ կետերով նախատեսված արտոնության կիրառմամբ թույլտվություն չի ստացել:

7. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան Երևան քաղաքի վարչական տարածքում կրոնական, պաշտամունքային շենքերի և շինությունների շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար 2026 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ:

8. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան Երևանի վարչական տարածքում նոր շենքերի և շինությունների շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար 2026 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տեղական տուրքի դրույքաչափի նվազեցման արտոնություն՝ տեղական տուրքի չափի 70 տոկոսի չափով (այդ թվում՝ նաև «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4.1 մասով սահմանված դեպքերի), եթե դիմումատուն (իրավաբանական անձի դեպքում նաև գործադիր մարմնի ղեկավարը) սույն որոշման 6-րդ կետով նախատեսված արտոնության կիրառմամբ թույլտվություն չի ստացել և Երևան համայնքի հանդեպ թույլտվության ժամկետի երկարաձգման օրվա դրությամբ չունի ժամկետանց դրամական պարտավորություններ: Ընդ որում, սույն կետում նշված արտոնության կիրառման արդյունքում շինարարության թույլտվության

Ժամկետների երկարաձգման համար հաշվարկված տեղական տուրքի գումարի չափը 400000000 (չորս հարյուր միլիոն) դրամը գերազանցելու դեպքում շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման համար 2026 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տեղական տուրքի դրույքաչափի նվազեցման արտոնություն՝ տեղական տուրքի տարեկան առավելագույն դրույքաչափը սահմանելով 400000000 (չորս հարյուր միլիոն) դրամ:

9. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան Երևանի վարչական տարածքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված բարձր դիսկալինության աստիճանի (IV կատեգորիայի) դասակարգման օբյեկտ հանդիսացող նոր շենքերի և շինությունների շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար 2026 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տեղական տուրքի դրույքաչափի նվազեցման արտոնություն՝ տեղական տուրքի չափի 85 տոկոսի չափով (այդ թվում՝ նաև «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4.1-ին մասով սահմանված դեպքերի), եթե դիմումատուն (իրավաբանական անձի դեպքում նաև գործադիր մարմնի ղեկավարը) սույն որոշման 6-րդ կետով նախատեսված արտոնության կիրառմամբ թույլտվություն չի ստացել, Երևան համայնքի հանդեպ թույլտվության ժամկետի երկարաձգման օրվա դրությամբ չունի ժամկետանց դրամական պարտավորություններ և շինարարության թույլտվության ժամկետի երկարաձգման օրվա դրությամբ դիմումատուի (իրավաբանական անձի դեպքում նաև գործադիր մարմնի ղեկավարի) նկատմամբ առկա չէ քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի Երևանում իրականացման լրացուցիչ պայմանների կարգը սահմանող Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N 405-Ն որոշմամբ սահմանված նորմերի խախտման փաստի առթիվ 2025 և 2026 թվականների ընթացքում կայացված վարչական տույժ նշանակելու մասին որոշում: Ընդ որում, սույն կետում նշված արտոնության կիրառման արդյունքում շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման համար հաշվարկված տեղական տուրքի գումարի չափը 400000000 (չորս հարյուր միլիոն) դրամը գերազանցելու դեպքում շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման համար 2026 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տեղական տուրքի դրույքաչափի նվազեցման արտոնություն՝ տեղական տուրքի տարեկան առավելագույն դրույքաչափը սահմանելով 400000000 (չորս հարյուր միլիոն) դրամ:

10. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ Երևանի վարչական տարածքում շինարարության համար մինչև 2022 թվականի դեկտեմբերի 16-ը ստացված շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ

կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե շինարարության թույլտվության ստացման համար ներկայացված հայտով կամ դրան կից շինարարական աշխատանքների կազմակերպման ժամանակացույցով կամ նախագծային փաստաթղթերի փորձագիտական եզրակացությամբ շինարարական աշխատանքների կատարման համար նախատեսված է եղել ավելի երկար ժամկետ, քան տրամադրված շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետն է և շինարարության թույլտվությունը երկարաձգվում է նշված փաստաթղթերով սահմանված ժամկետից պակաս տրամադրված ժամկետը չգերազանցող ժամկետով և դիմումատուն (իրավաբանական անձի դեպքում նաև գործադիր մարմնի ղեկավարը) Երևան համայնքի հանդեպ շինարարության թույլտվության ժամկետի երկարաձգման օրվա դրությամբ չունի ժամկետանց դրամական պարտավորություններ:

11. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված նախագծային փաստաթղթերում բազմաբնակարան բնակելի շենքերի և համալիրների համաձայնեցված նախագծերի վերահամաձայնեցման շրջանակներում միայն ստորգետնյա ավտոկայանատեղիների ծավալային (մակերեսի) փոփոխություններ կատարելու դեպքում, օրենսդրությամբ սահմանված կարգով նոր շինարարության թույլտվություն տրամադրելիս շինարարության թույլտվության՝ 2026 թվականի համար սահմանված տեղական տուրքի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե դիմումատուն (իրավաբանական անձի դեպքում նաև գործադիր մարմնի ղեկավարը) Երևան համայնքի հանդեպ թույլտվության տրամադրման օրվա դրությամբ չունի ժամկետանց դրամական պարտավորություններ:

12. 3-րդ և 4-րդ կարգի վթարայնության աստիճանի 10 և ավել բնակարան ունեցող շենքերի քանդման և փոխարենը նոր բազմաբնակարան շենքերի կառուցման նպատակով Երևանի վարչական տարածքում շինարարության թույլտվության համար 2026 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե կառուցապատողը նախքան թույլտվություն ստանալու հայտ ներկայացնելը փաստացի կատարել է քաղաքաշինական ծրագրի ընթացքում նախատեսված վերաբնակեցման կամ գույքի (բաժնեմասի) ձեռքբերման պայմանները և դիմումատուն (իրավաբանական անձի դեպքում նաև գործադիր մարմնի ղեկավարը) Երևան համայնքի հանդեպ թույլտվության տրամադրման օրվա դրությամբ չունի ժամկետանց դրամական պարտավորություններ:

13. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ Երևանի վարչական տարածքում շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման համար 2026 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված քաղաքաշինական փաստաթղթերի հիման վրա իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում փլուզումների հետևանքով լրացուցիչ շինարարական աշխատանքների անհրաժեշտությամբ պայմանավորված շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգվում է փլուզումների հետևանքների վերացման և վերականգնման համար անհրաժեշտ՝ համապատասխան փորձագիտական եզրակացությամբ նախատեսված ժամկետով:

14. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան Երևանի վարչական տարածքում բազմաբնակարան շենքերի և շինությունների շինարարության թույլտվության ժամկետների մեկ անգամ և մինչև 5 ամիս ժամկետով երկարաձգման համար 2026 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե կառուցապատողը մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ճանաչվել է սնանկ: Սույն կետով սահմանված արտոնության կիրառման համար հիմք է կառուցապատողին սնանկ ճանաչելու մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:

15. Երևանի վարչական տարածքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի) դասակարգման օբյեկտ հանդիսացող բազմաբնակարան և բազմաֆունկցիոնալ բնակելի շենքերի և համալիրների համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ շինարարության թույլտվություն տրամադրելու համար 2026 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են դրույքաչափի նվազեցման արտոնություններ՝ ստորև ներկայացված տոկոսների չափով.

Տեսակ	Կառուցապատման մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին		Նվազեցվող տոկոսի չափ
Շենքեր	Կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին	40-50 %	10 %
		30-40 %	20 %
		Մինչև 30 %	30 %
1-ից ավելի շենքերից բաղկացած համալիրներ	Շենքերի կառուցապատման մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին	20-25 %	20 %
		Մինչև 20 %	40 %

16. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

26. Երևան համայնքում 2026 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևան համայնքում 2026 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՅԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Հակոբյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Իոսիֆ Կուբատյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Հակոբյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել է ավագանու 8 անդամ.

1. Միքայել Խաչատրյան – Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
2. Արշակ Սարգսյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
3. Իզաբելլա Աբգարյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
4. Գրիգոր Իսկանդարյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
5. Մեսրոպ Մանուկյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
6. Արամ Թորոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար
7. Նատալյա Սինորյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
8. Լևոն Լևոնյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես

եկավ խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը, իսկ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անունից՝ խմբակցության անդամ Աշոտ Սարգսյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Սահմանել, որ.

1) Երևանի ենթակայության մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ տեղական վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե՝

ա. երեխայի ծնողները, կամ ծնողներից մեկը կամ նրա օրինական ներկայացուցիչները կամ օրինական ներկայացուցիչներից մեկը մշտապես կամ փաստացի հաշվառված են Երևան քաղաքում.

բ. երեխան զոհված զինծառայողի ընտանիքի զավակ կամ եղբայր կամ քույր է, կամ երեխայի ծնողները, կամ ծնողներից մեկը կամ նրա օրինական ներկայացուցիչները կամ օրինական ներկայացուցիչներից մեկը Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ընթացքում կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով զոհվել (մահացել) է կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ անհայտ կորելու հետևանքով դատական կարգով ճանաչվել է անհայտ բացակայող կամ մահացած.

գ. երեխայի ծնողները, կամ ծնողներից մեկը կամ նրա օրինական ներկայացուցիչները կամ օրինական ներկայացուցիչներից մեկը զինծառայող է, ռազմական գործողությունների մասնակից է.

դ. միակողմանի կամ երկկողմանի ծնողագուրկ երեխա է.

ե. երեխայի ծնողները, կամ ծնողներից մեկը կամ նրա օրինական ներկայացուցիչները կամ օրինական ներկայացուցիչներից մեկը 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն ունեցող անձ է, կամ ֆունկցիոնալության ծանր կամ խորը աստիճանի սահմանափակումով է.

զ. հաշմանդամություն ունեցող երեխա է, կամ Հայաստանի Հանրապետության տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից տրված եզրակացությամբ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա է.

է. երեխայի ծնողներից մեկը կամ նրա օրինական ներկայացուցիչները կամ օրինական ներկայացուցիչներից մեկը ներքին տեղահանված անձ է.

ը. երեխայի ծնողներից մեկը կամ նրա օրինական ներկայացուցիչները կամ օրինական ներկայացուցիչներից մեկը ունի փախստականի կարգավիճակ.

թ. երեխայի ծնողներից մեկը կամ նրա օրինական ներկայացուցիչները կամ օրինական ներկայացուցիչներից մեկը ունի ՀՀ-ում ապաստան հայցողի կարգավիճակ.

Ժ. Արցախի Հանրապետության տարածքներից տեղահանված և Երևան տեղափոխված ընտանիքի երեխա է.

2) սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում չներառված Երևանի ենթակայության մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են դրույքաչափի նվազեցման արտոնություններ, այն սահմանելով՝ 12000 /տասներկու հազար/ դրամ.

3) 2026 թվականի համար, Երևանի ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, կերպարվեստի, արվեստի դպրոցներ) ուսումնական պլանով նախատեսված ծառայություններից սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունում նշված անձանց, ինչպես նաև «Երևան» երիտասարդական նվագախմբի մասնակիցների համար (տվյալ գործիքի ուսուցման դեպքում) կիրառվում է զրոյական դրույքաչափ, իսկ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի մնացած պարբերություններով սահմանված օգտվողների համար կիրառվում են դրույքաչափի նվազեցման հետևյալ արտոնությունները.

ա. խորացված մասնագիտական երգեցողության ուսուցման համար՝ ամսական 8000 /ութ հազար/ դրամ.

բ. գործիքային (դաշնամուր, լարային նվագարաններ, փողային և ազգային նվագարաններ, հարվածային գործիքներ, ակորդեոն, տավիղ, կիթառ, դհոլ) բաժիններում ուսուցման համար՝ ամսական 8000 /ութ հազար/ դրամ.

գ. երգեցողության ուսուցման համար՝ ամսական 8000 /ութ հազար/ դրամ.

դ. պարարվեստի ուսուցման համար՝ ամսական 8000 /ութ հազար/ դրամ.

ե. կերպարվեստի ուսուցման համար՝ ամսական 8000 /ութ հազար/ դրամ.

զ. թատերարվեստի ուսուցում՝ ամսական 8000 /ութ հազար/ դրամ.

է. սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «ե» պարբերությամբ նշված անձինք, 4 և ավել երեխաներ ունեցող ընտանիքները, ինչպես նաև սույն ենթակետի «բ» և «գ» պարբերություններում նշված ծառայություններից որևէ մեկով օգտվողները՝ նույն ենթակետի «բ» և «գ» պարբերություններում նշված մեկ այլ ծառայությունից օգտվելու համար ամսական վճարում են 4000 /չորս հազար/ դրամ.

4) Երևանի ենթակայության թանգարանների մուտքի համար 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են դրույքաչափի նվազեցման կամ զրոյական դրույքաչափի արտոնություններ, դրանք սահմանելով.

h/h	Երևանի ենթակայության ՀՈԱԿ-ներ	Մուտքի տոմսի արժեքի տեղական վճարի չափը			
		դպրոցական	ուսանող	մեծահասակ	Նախադպր. տարիքի երեխաների, ժամկետային զին., Հայրենական պատերազմի մասնակիցներ, կենսաթոշակառուներ, 1-ին խմբի հաշմանդամություն

					ունեցող անձինք (ուղեկցողի հետ), 2-րդ և 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք (առանց ուղեկցողի), հաշմանդամություն ունեցող երեխաներ, Թանգարանների միջազգային խորհրդի (ԻԿՕՄ) և Հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանման միջազգային խորհրդի (ԻԿՕՄՕՍ) անդամներ
1.	Երևան քաղաքի պատմության թանգարան	500 /հինգ հարյուր/ դրամ	1000 /մեկ հազար/ դրամ	-	0 /զրո/ դրամ
2.	«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան	500 /հինգ հարյուր/ դրամ	1000 /մեկ հազար/ դրամ	-	0 /զրո/ դրամ
3.	Շենգավիթ հնավայր և թանգարան	300 /երեք հարյուր/ դրամ	700 /յոթ հարյուր/ դրամ	1000 /մեկ հազար/ դրամ	0 /զրո/ դրամ
4.	Կարմիր բլուր հնավայր	300 /երեք հարյուր/ դրամ	700 /յոթ հարյուր/ դրամ	1000 /մեկ հազար/ դրամ	0 /զրո/ դրամ
5.	Ժամանակակից արվեստի թանգարան	500 /հինգ հարյուր/ դրամ	1000 /մեկ հազար/ դրամ	-	0 /զրո/ դրամ
6.	Կարեն Դեմիրճյանի թանգարան	0 /զրո/ դրամ	0 /զրո/ դրամ	0 /զրո/ դրամ	0 /զրո/ դրամ
7.	Ֆրիտյոֆ Նանսենի թանգարան	0 /զրո/ դրամ	0 /զրո/ դրամ	0 /զրո/ դրամ	0 /զրո/ դրամ

5) Երևանի ենթակայության թանգարանների մուտքի համար 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են զրոյական դրույքաչափի արտոնություններ յուրաքանչյուր ամսվա վերջին շաբաթ օրվա համար,

6) Երևանի ենթակայության թանգարանների մուտքի համար 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են դրույքաչափի արտոնություններ՝ մուտքի մեծաքանակ տոմսերի ձեռք բերման դեպքում՝ կնքելով համապատասխան պայմանագրեր.

ա. 100-ից 500 տոմս ձեռք բերելու դեպքում՝ 5 տոկոս,

բ. 500-ից 800 տոմս ձեռք բերելու դեպքում՝ 10 տոկոս,

գ. 800 և ավելի տոմս ձեռք բերելու դեպքում՝ 15 տոկոս,

7) ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր կամ այլ օրինական տիրապետող հանդիսացող և այն ղեկավարող տեղաշարժվելու դժվարություն ունեցող հաշմանդամություն ունեցող անձի կամ այդպիսի հաշմանդամություն ունեցող անձին կամ հաշմանդամություն ունեցող երեխա (այսուհետ՝ հաշմանդամություն ունեցող անձ) փոխադրող տրանսպորտային միջոց ղեկավարող անձանց համար 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափերի նկատմամբ, միայն մեկ տրանսպորտային միջոցի համար, կիրառվում է արտոնություն՝ ազատելով Երևան քաղաքի «Ա» և «Բ» գոտիների համար հաշվարկված ավտոկայանատեղի տեղական վճարի վճարումից.

8) որպես վառելիք էլեկտրաէներգիա օգտագործող և բացառապես էլեկտրական շարժիչով աշխատող ավտոտրանսպորտային միջոցի (էլեկտրամոբիլ) սեփականատեր կամ այլ օրինական տիրապետող հանդիսացող և այն ղեկավարող անձանց համար 2026 թվականի՝ մեկ տարվա համար (մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ) սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ ազատելով Երևան քաղաքի «Ա» և «Բ» գոտիների համար հաշվարկված ավտոկայանատեղի տեղական վճարի վճարումից.

9) Երևան քաղաքի վարչական տարածքում Երևան համայնքի ենթակայությամբ պետական և համայնքային ուսումնական հաստատությունների համար՝ Երևանի քաղաքի ավագանու որոշմամբ սահմանված Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող հողամասերի սահմանների ճշտման և (կամ) հողհատկացման հիմքերի վերականգնման դեպքերում (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի) փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ.

10) Երևան քաղաքի վարչական տարածքում ուսումնական հաստատությունների, ինչպես նաև սույն որոշումն ուժի մտնելու օրվանից հաշված 15 և ավելի տարի առաջ շինարարական աշխատանքները մեկնարկած (փաստը հաստատվում է հիմնավորող փաստաթղթերի կամ տվյալների ներկայացմամբ) և չավարտված մշակույթի շենքերի և

շինությունների համար՝ Երևանի քաղաքի ավագանու որոշմամբ սահմանված՝ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու, ինչպես նաև նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) փոփոխություն կատարելու (շենքի կամ շինության ծավալների ավելացում նախատեսող նոր նախագծման թույլտվություն կազմելու) համար 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ:

11) Երևան քաղաքի վարչական տարածքում կրոնական, պաշտամունքային շենքերի և շինությունների համար՝ Երևանի քաղաքի ավագանու որոշմամբ սահմանված՝ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ:

12) Երևան քաղաքի վարչական տարածքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ սահմանված բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի) դասակարգման օբյեկտ հանդիսացող բազմաբնակարան և բազմաֆունկցիոնալ բնակելի շենքերի և համալիրների համար՝ Երևան քաղաքի ավագանու որոշմամբ սահմանված նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու համար 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են դրույքաչափի նվազեցման արտոնություններ՝ ստորև սահմանված տոկոսների չափով.

Տեսակ	Կառուցապատման մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին		Նվազեցվող տոկոսի չափ
Շենքեր	Կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին	40-50 %	10 %
		30-40 %	20 %
		Մինչև 30 %	30 %
1-ից ավելի շենքերից բաղկացած համալիրներ	Շենքերի կառուցապատման մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին	20-25 %	20 %
		Մինչև 20 %	40 %

13) Երևան քաղաքի վարչական տարածքի տարածագնահատման (գտնվելու վայրի) 7-12-րդ գոտիներում արտադրական նպատակային նշանակության շենքերի և շինությունների համար՝ Երևանի քաղաքի ավագանու որոշմամբ սահմանված՝ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տեղական վճարի դրույքաչափի նվազեցման արտոնություն՝ տեղական վճարի դրույքաչափի 50 տոկոսի չափով, եթե դիմումատուն

(իրավաբանական անձի դեպքում նաև գործադիր մարմնի ղեկավարը) Երևան համայնքի հանդեպ չունի ժամկետանց դրամական պարտավորություններ.

14) Երևան քաղաքի վարչական տարածքում պետական ենթակայությամբ սոցիալական պաշտպանության կազմակերպությունների շենքերի և շինությունների համար՝ Երևան քաղաքի ավագանու որոշմամբ սահմանված նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու, ինչպես նաև նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) փոփոխություն կատարելու (շենքի կամ շինության ծավալների ավելացում նախատեսող նոր նախագծման թույլտվություն կազմելու) համար 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ գրոյական դրույքաչափի կիրառմամբ.

15) Երևան քաղաքի վարչական տարածքում պետական ենթակայությամբ սոցիալական պաշտպանության կազմակերպությունների համար՝ Երևան քաղաքի ավագանու որոշմամբ սահմանված Երևան համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերի սահմանների ճշտման և (կամ) հողիատկացման հիմքերի վերականգնման դեպքերում (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի) փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ գրոյական դրույքաչափի կիրառմամբ.

16) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված նախագծային փաստաթղթերում միայն ստորգետնյա հարկերի մակերեսի ավելացմամբ պայմանավորված փոփոխություններ կատարելու դեպքում՝ Երևան քաղաքի ավագանու որոշմամբ սահմանված նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու, ինչպես նաև նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) փոփոխություն կատարելու (շենքի կամ շինության ծավալների ավելացում նախատեսող նոր նախագծման թույլտվություն կազմելու) համար 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ գրոյական դրույքաչափի կիրառմամբ.

17) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված նախագծային փաստաթղթերում վերգետնյա հարկի (հարկերի) ավելացմամբ պայմանավորված փոփոխություններ կատարելու դեպքում՝ Երևան քաղաքի ավագանու որոշմամբ սահմանված նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու համար 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է դրույքաչափի նվազեցման արտոնություն, այն սահմանելով՝ 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես (շենքերի և շինությունների ստորգետնյա և վերգետնյա հարկերի արտաքին չափերի մակերեսների հանրագումար) ունեցող շենքերի և շինությունների համար (նվազեցվում է օրենսդրությամբ նախատեսված ավտոկայանատեղերի նվազագույն ծավալը ապահովված մակերեսից ավել մակերեսը)՝

1000000 /մեկ միլիոն/ դրամի և 3001 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար 1000000 /մեկ միլիոն/ դրամի հանրագումարի ու Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքում տեղական վճարների 2026 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» որոշման հավելվածի 14-րդ կետով սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը.

18) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված քաղաքաշինական փաստաթղթերի հիման վրա՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 10 և ավելի տարի առաջ շինարարական աշխատանքները մեկնարկած /փաստը հաստատվում է դիմումատուի կողմից ներկայացված փորձագիտական եզրակացությամբ/ և տրամադրված շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետները սպառված, Երևան քաղաքի վարչական տարածքում 10 և ավելի բնակարաններից բաղկացած բազմաբնակարան շենքերի համար՝ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու համար 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ.

19) Երևան քաղաքի «Ա» և «Բ» գոտիներում կահավորված վճարովի ավտոկայանատեղում ավտոտրանսպորտային միջոցի կիրակի օրերին կայանման համար կիրառվում է արտոնություն 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափերի նկատմամբ՝ ազատելով հաշվարկված ավտոկայանատեղի տեղական վճարի վճարումից.

20) Երևան համայնքի վարչական տարածքում շենքերից, շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկող սարքերի միջոցով առևտուր իրականացնելու կամ ծառայություններ մատուցելու նպատակով Երևան քաղաքի վարչական տարածքում շենքերից և շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկող սարքերի, այդ թվում՝ բանկոմատների, վճարային տերմինալների կամ սառնարանների, սուրճի, ջրի, այդ թվում՝ հանքային, հյութերի և զովացուցիչ ըմպելիքների կամ այլ դիսպենսերների, սարքերի, սարքավորումների (այսուհետ՝ սարքավորում) տեղադրման թույլտվության համար 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են դրույքաչափի նվազեցման արտոնություններ, այն սահմանելով՝

ա. Արաբկիր վարչական շրջանի տարածքում՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ 20000 /քսան հազար/ դրամ՝ մեկ սարքավորման համար.

բ. Կենտրոն վարչական շրջանի տարածքում՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ 26000 /քսանվեց հազար/ դրամ՝ մեկ սարքավորման համար.

գ. Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների տարածքներում՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ 16000 /տասնվեց հազար/ դրամ՝ մեկ սարքավորման համար.

21) Արցախյան պատերազմների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանքներ կամ ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ զոհված, գերեվարված կամ անհայտ կորած կամ անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված անձանց կամ նրանց ընտանիքի անդամներին (երեխաներ, ծնողներ և ամուսին), ինչպես նաև ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակում ունեցող կամ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողներին սեփականության իրավունքով պատկանող (ընդհանուր բաժնային սեփականության իրավունքի դեպքում իր բաժնի մասով) բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների աղբահանության աշխատանքները կազմակերպելու 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ.

22) Պետական նպաստների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով միայնակ չաշխատող կենսաթոշակառու համարվող անձին պատկանող (բաժնային սեփականության իրավունքի դեպքում իր բաժնի մասով) բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների աղբահանության աշխատանքները կազմակերպելու 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ.

23) ամսական մինչև 10 կիլովատ էլեկտրաէներգիա սպառող բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների աղբահանության աշխատանքները կազմակերպելու 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ.

24) բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում՝

ա. բազմաբնակարան բնակելի կամ բազմաֆունկցիոնալ շենքերի բնակարանների ընդհանուր մակերեսի 75 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար՝ կոշտ կենցաղային թափոնների աղբահանության աշխատանքները կազմակերպելու 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տեղական վճարի դրույքաչափի նվազեցման արտոնություն՝ 50 տոկոսի չափով.

բ. անհատական բնակելի տների, առանձնատների, այգետնակների (ամառանոցների), օժանդակ ու տնտեսական շինությունների, բազմաբնակարան բնակելի կամ բազմաֆունկցիոնալ շենքերի ընդհանուր մակերեսի 75 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար՝ կոշտ կենցաղային թափոնների աղբահանության աշխատանքները կազմակերպելու 2026 թվականի

համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տեղական վճարի դրույքաչափի նվազեցման արտոնություն՝ 75 տոկոսի չափով.

գ. առանձին միավոր գրանցված (հաշվառված) ավտոտնակների համար՝ կոշտ կենցաղային թափոնների աղբահանության աշխատանքները կազմակերպելու 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ.

25) «30 օր» ֆիզիկական քարտ տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 30 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում առավելագույնը կես ժամը մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ 8-17 (ներառյալ) տարեկան Երևան քաղաքի հիմնական և ավագ դպրոցների աշակերտների համար՝ Երևան քաղաքի վարչական տարածքում տարբեր տեսակի տրանսպորտային միջոցներով (ավտոբուս, տրոլեյբուս, մետրոպոլիտեն) ներհամայնքային կանոնավոր փոխադրումների միասնական ծառայություններից օգտվելու համար 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տեղական վճարի դրույքաչափի նվազեցման արտոնություն՝ այն սահմանելով 7200 /յոթ հազար երկու հարյուր/ դրամ.

26) «30 օր» ֆիզիկական քարտ տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 30 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում առավելագույնը կես ժամը մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ 63 տարին լրացած կենսաթոշակառուների համար՝ Երևան քաղաքի վարչական տարածքում տարբեր տեսակի տրանսպորտային միջոցներով (ավտոբուս, տրոլեյբուս, մետրոպոլիտեն) ներհամայնքային կանոնավոր փոխադրումների միասնական ծառայություններից օգտվելու համար 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տեղական վճարի դրույքաչափի նվազեցման արտոնություն՝ այն սահմանելով 6300 /վեց հազար երեք հարյուր/ դրամ.

27) «30 օր» ֆիզիկական քարտ տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 30 օրվա ընթացքում ակտիվացման (առաջին անգամ օգտագործելու) ժամկետով, ակտիվացման պահից 30 օրվա ընթացքում անսահմանափակ քանակով ուղևորություններ (յուրաքանչյուր տրանսպորտային միջոցում առավելագույնը կես ժամը մեկ օգտագործման պայմանով) կատարելու հնարավորությամբ անապահովության նպաստառուների համար՝ Երևան քաղաքի վարչական տարածքում տարբեր տեսակի տրանսպորտային միջոցներով (ավտոբուս, տրոլեյբուս, մետրոպոլիտեն) ներհամայնքային կանոնավոր փոխադրումների միասնական ծառայություններից օգտվելու համար 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի

նկատմամբ կիրառվում է տեղական վճարի դրույքաչափի նվազեցման արտոնություն՝ այն սահմանելով 7200 /յոթ հազար երկու հարյուր/ դրամ.

